Դշի (19 Օքտ.). երեկոյիս լու եղև ի քաղաքս՝ եթէ ի վերայ կղզոյն Պօղճա մարդ եդեալ են ելանել անդ։

Ուրբաթ (21 Օքտ.). Մարտիրոս վարդապետն ել և գնաց ի Պէկղօզ և անտի նաև գտեալ երթիցէ ի Կաֆա։

Եւ Ուրբաթի օրս տիւան առնէ և նստին ամենայն ճարտարապետքն առ մէմարիւն, որպէս օրէն է, և ի հարց մտեալ թէ վասն է՞ր այնպէս առնէ այդ մարդն ձեզ, և յայն բան գան առ տիւանն Ճակոբն Ասքօյին (գողը կորաած) թողուք եւ հասեալ ի վերայ Նոցա (գողը կորաած) ի պարանոցն պատատեալ մինչչև ըզդրունս դրսին գտեալ և փախ տվեալ պրծին ի տանէն, որ գնաց ի սահմանս Ծովեզերացն որ ասի Միջագիւղ, և անդ բնակեցաւ՝ թէ գինչ լինիցի։ Այլ չարքն կրկին խորհէին խորհուրդ գի՛րդ կորուսցեն գնա և չանային ունել գնա և ոչ գտանէին։

Եւ ի Շաբաթի օրս (22 Օքտ.) երթեալ ի սահմանադրեալ տեղիան, որ գխորհուրդն առնէին թէ գի՛րդ արասցեն, և գնացեալ առեալ Բ չաւուշ չխտ հասարակել աւուրն և սահմանացն մէգինքն և իմամքն՝ և մտեալ ի տունս, որոց կարծէին անդ լինել զՂազար վարդապետն՝ զի կալցեն, և ոչ գտին ի տունս երկոցունց փեսայից նորին և ի տուն Տէր Մելտոնին, և դարձեալ ցրուեցան։ Սակայն ըմբռնեալ զՏէր Անտոնն և զաշակերտ նորին թէ Դուք գիտակ էք գնա թէ ո՛ւր իցէ՝ ասացէ՛ք։ Եւ բազում ահիւ և սպառնալեօք տանին գնա չաւուշովն թէ Գտանել տամք եւ ի վէգիրն մատուցանեմք. և առեալ տանին ի խանն, և երեկոյանայ եւ ցրուին։ Բայց ի գիշերս յամենայն յանցս ճանապարհացն ի սահմանս Հայոց եդին զոմն Մովսէս անուն հանդերձ եասախճով, զի գտցեն եւ ունիցին գնա, և ոչ գտին։ Այլ գնացեալ ի Սուրբ Նիկողոս և պատուիրեալ աթոռակալացն, ևս Ղազար երեսփոխա-